թեան նախարար Ա. Զիլինգարեանը, Խորհրդարանի անդամներ, դատաստանական ու հասարակական գործիչներ և խուռն բազմութիւն հետաքրքրողների։ Դատական նիստի սկզբին ողջոյնի խօսք ասացին վարչապետը, արդարադատութեան նախարարը և դատարանի նախագահ Մակ. Մելիք-Միրզախանեանը։ Ապա՝ բեմ բարձրացաւ դատական կազմը. նախագահ՝ Մ. Մելիք-Միրզախանեան, անդամներ՝ Ջ. Գեղամեան և Ա. Տէր-Յակովբեան. դատախազ Ա. Մալխասեան, դատախազի օգնական՝ Վ. Ահարոնեան, քարտուղարներ՝ Ն. Տէր-Յակովբեան և Ս. Շմաւոնեան։ Երդւեալ ատենակալներից ներկայ էին 19 հոգի և 1 տեղակալ — բոլորն էլ տղամարդիկ։ Նիստի բացումից և ընթացիկ ձևականութիւնների լրացնելուց յետոյ, ատենակալները յայտարարեցին, թէ իրենք հրաժարւում են կրօնական երդումից և ազնիւ խօսք են տալիս դատելու խղճի մտօք։

Կարճ ընդմիջումից յետոյ, վիճակահանութեամբ կատարւեց 12 ատենակալների ընտրութիւնը։ Հայաստանի անդրանիկ ատենակալների ատեանի անդամ լինելու պատուին արժանացան՝ Արշ. Տէր-Աբրահամեանը, Սարգ. Հախնազարեանը, Նշ. Ժամագործեանը, Վարդ. Մամաջանեանը, Գր. Տէր-Յակովբեանը, Սիր. Տէր-Մարտիրոսեանը, Գր. Վարդանեանը, Հմ. Սողոմոնեանը, Յովս. Աւետիսեանը, Զաւ. Կորկոտեանը, Միհր. Աթանէսեանը և Թադ. Դրամփեանը. տեղապահներ՝ Մովս. Գիւլխանդանեանը և Երւ. Ֆրանգեանը։ Ընտրուածները մի քանի րոպէով հեռացան և ընտրեցին իրենց համար աւագ՝ Սիր. Տէր-Մարտիրոսեանին։ Ատենակալները հասարակական տարբեր խաւերի պատկանող մարդիկ էին։

Առաջին գործը Դարալագեազի Ուլնիանորաշէն գիւղացի Ենովք Յովհաննիսեանի և Զանգեզուրի գիւղացի Մանուկ Մովսէսեանի դէմ յարուցւող մեղադրանքն էր պարսկահպատակ Մամէդ Ասքեար Ալի օղլուին կողոպտելու փորձի դէմ։ Ամբաստանեալներին պաշտպանում էր երդւ. հաւատարմատար Գ. Տէր-Գրիգորեանը։ Հարցաքննութիւնից, վկաներին և կողմերի ճառերը լսելուց յետոյ, երդւեալ ատենակալները առանձնացան և 10 րոպէի խորհրդակցութիւնից յետոյ մեղադրեալներին յայտարարեցին անպարտ։

Երդւեալ ատենակալների դատարանի առաջին նստաշրջանը տևեց մինչև մարտ 26-ը։

Խորհրդարանի մարտ 1-ի օրէնքով արդարադատութեան նախարարութեան դիւանին կից կազմւեց 3 հոգինոց արևմտահայ իրաւագիտական բաժին, որի նպատակն էր ա) մասնակցել օրինագրքերի քննութեան, մշակման և խմբագրման գործին, բ) ուսումնասիրել արևմտահայ հատուածի մէջ գոյութիւն ունեցող ընտանեկան, ժառանգական և այլն սովորութիւններն ու իրաւական հասկացողութիւնները, նրանց հարգատ ոգին մեր նոր մշակւող օրէնքների մէջ պահպանելու համար։

Հանրային կրթութեան ասպարէզում մշակեցին մի շարք օրէնքներ. մարտին Խորհրդարանը սկզբունքով հաստատեց դպրոցական յանձնախմբի հետևեալ օրինագիծը եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին.